ԿԱՆՈՆ

Վասն կարգապահութեան ի հանդիսի օծման Վեհ. Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Է-րդի, որ ունի կատարել ի 1 Յուլիսի 1912.

Ընտրեալն ի Հայրապետութիւն՝ ի ժամ կատարման հանդիսի Օծման՝ յետ ասելոյ «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած ևայլն», կանգնի ի կեդրոնի բեմին Աւագ սեղանոյ Տաճարին և երդնու զերդումն «Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի ևայլն... (ըստ Մաշտոցի երես 4), և ապա անկանի ի ծունկս ի նոյն տեղւոջ, և երկոտասան եպիսկոպոսունք նոյնպէս զդեստաւորեալ՝ կացցեն շուրջանակի Հայրապետին և սկսանի կարգն օծման։

Նախ Տ. Տ. Արիստակէս և Խորէն վարդապետք ասասցեն տուն առ տուն զՍաղմոսն ՁԸ. զլ. «Զողորմութիւնս քո Տէր յաւիտեան օրհնեցից», մինչ ցայն տունն՝ որ ասէ. «Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից զաթոռ Քո».

Յետ որոյ Տ. Աշոտ եպիսկոպոսն ասասցէ «Աղաչեսցուք զմարդասէրն Աստուած». (երես 4).

Տ. Սուքիաս արքեպիսկոպոսն ասասցէ թիւ, «Աստուածային և երկնաւոր շնորհ». ևայլն (երես 4).

Երկոտասան եպիսկոպոսունքն միանգամայն դնելով զձեռս ի վերայ գլխոյ Հայրապետին՝ միասին ծանր, բառ առ բառ ասասցեն, «Մեք դնեմք զձեռս ի վերայ, ևայլն» (երես 4). (այս աղօթք պարտ է ասել անգիր)։

Ապա Տ. Ներսէս արքեպիսկոպոսն ընթերցցի զաղօթս. «Գոհանամք զքէն Աստուած մշանջենաւոր» (երես 4).

Տ. Սահակ արքեպիսկոպոսն ընթերցցի զգիրսն ելիս. «Խօսեցայ. Տէր ընդ Մովսիսի» (եր. 7).

Տ. Յովհաննէս արքեպիսկոպոսն ընթերցցի զգիրս Բ. թագաւորութեան «Եւ եկին ամենայն ծերքն Իսրայէլի» (երես 8).

Տ. Յուսիկ արքեպիսկոպոսն ընթերցցի զգիրսն Եզե-

կիլի մարգարէի. «Եւ եղիցի ի մտանել քահանայից». (երես 9).

Տ. Մխիթար եպիսկոպոս ընթերցցի զգիրն Եսայի մարգարէի. «Բայց Դուք քահանայք Տեառն կոչեսջիք» (երես 9).

Տ. Մեսրոպ եպիսկոպոսն ընթերցցի «Ի բաց թօթափել այսուհետև» (երես 10).

Տ. Աշոտ եպիսկոպոսն ընթերցցի զաւետարանն Մատթէոսի. «Եւ եկեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեայ» (երես 10). և ասացէ զՀաւատամքն.

Յետ այնորիկ Տ. Խորէն եպիսկոպոսն վերաբերեսցէ զս. խորհուրդն.

Եւ մինչ հասանեն յՈղջոյնն, ասացեն եղանակաւ ասն առ տուն զքարոզն. «Աստուած մեծ և սքանչելագործ զօրութիւն»։

Յետ ձայնաւոր քարոզից՝ Տ. Սուքիաս արքեպիսկոպոսն ընթերցցի զաղօթս «Տէր Աստուած արարիչ ամենայն արարածոց» և այլն (երես 15).

Յետ որոյ նոյն Տ. Սուքիաս արքեպիսկոպոսն առեալ ի սեղանոյն զԱղաւնին Միւռոնի և եկեալ առ Հայրապետն՝ որ ի ծունկս անկեալ իցէ, հեղցէ զս. Միւռոնն ի վերայ գագաթան Հայրապետին՝ ասելով բարձրաձայն՝ ձայնակցութեամբ ամենեցուն.

«Առաքելոյ Աղաւնւոյ» և այլն.

Երկրորդ անգամ հեղլով ասասցէ.

«Անեղութական աղաւնի» և այլն.

Եւ երրորդ անգամ հեղլով ասասցէ.

«Օրհնութիւն ի բարձունս» և այլն.

Իսկ դպիրքն ի վերջ շարականիս ասասցեն ծանր ձայնիւ, «Ամէն ալէլուիա, ալէլուիա»։

Երկոտասան եպիսկոպոսունքն հեղեալ ի գագաթ Հայրապետի զմիւռոնն բոյթ մատամբ իւրեանց նկարեսցեն (խաչաձև) ի վերայ գագաթանն յիւրաքանչիւր կողմանց և ընդ նմին ամենեքեան միաբան ասասցեն ձայնիւ «օրհնեսցի, օծցի և սրբեսցի գագաթ Տ. ԳԷՈՐԳ կաթուղիկոսի» և՛ն.

Յետ օծմանն եպիսկոպոսունք ծածկեսցեն զՀայրապետական քողն ի վերայ գլխոյ Հայրապետին, կապեն զԿոնքեռն զԻօտեաւ Հայրապետի յաջոյ կողմանէ և տան ի ձեռն զՀայրապետական գաւազանն։

Ի ժամ արկանելոյ զքողն դպիրքն երգեն զշարականն Գ.Զ «Այսօր ուրախացեալ ցնծան երկնից բազմութիւնքն» և «Որք արժանաւորեցայք գալ»...

Ապա Ս. Սարգիս եպիսկոպոսն ասասցէ զսաղմոս. ԻԲ, «Ծէր հովուեսցէ զիս» և ընթերցցի զգիրսն Պետրոսի առաքելոյն «Զերիցունս այսուհետև ապաչեմ» (երես 20).

Ս. Անանիա արքեպիսկոպոսն ընթերցցի զաւետարանն Յոհաննու, «Եւ իբրև ճաշեցին» (եր. 20).

Ապա սարկաւագունք երգեսցեն զՈղջոյնն և եպիսկոպոսունքն համբուրելով զգազաթն Հայրապետին տան զողջոյնն ըստ կարգին։

Եւ այնուհետև Օծեալ Հայրապետն կատարէ զխորհուրդ ս. Պատարագին։ Իսկ եպիսկոպոսունքն զգեստաւորեալ կացցեն յաջմէ և յահեկէ սեղանոյն ցաւարտ պատարագին։

Յաւարտ պատարագին դպիրքն երգեսցեն «Որ զշնորհս»... և թափօր կազմեալ բոմանդակ ուխտիւ միաբանութեան և զգեստաւորեալ ըստ կարգին, տանին զշնորհազարդ ս. Հայրապետն ի վեհարան շարականօք, բուրվառօք, խաչօք և խաչվառօք և ի մտանելն Հայրապետին ի ծաղկեալ դահլիճն, դպիրքն երգեն զշարականն. Գ.Զ. «Այսօր Քահանայապետ ճշմարիտ».

Սարկաւագն քարոզէ «Ս. Խաչիւս» և Հայրապետն ասէ. «Պահպանիչ». «Հայր մեր» և «Օրհնեալ եղերուք» և նստեալ յաթոռ ամենեքեան մատչին ի համբոյր ս. Աջոյ նորապսակ ս. Հայրապետին և ընկալեալ զՀայրապետական օրհնութիւնն, արձակին ի խաղաղութիւն։

Լուսարարապետ՝ Ղեւոնդ եպիսկոպոս

28 Յունիսի 1912 թ.
ս. Էջմիածին.